«ԱՐԵՒԵԼՔ»
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ՂԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. Պոլսոյ համար տարեկան 80 Ղ.րշ.
» » վեցամսեայ 45 »
Գաւառներու համար տարեկան 108 »
» » վեցամսեայ 60 »
Օտար երկիրներու համար տարեկան 25 Ֆրք.
» » վեցամսեայ 20 »
Թղթատարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱ

30 Դեկ. 1907 — 1329 — 4 Janvier 1908 — 24me année № 6678

# ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

آره ولك
ارمنیجه یومی و سیاسی غزته
صاحب امتیازی قره کین بویاجیان
درعلیه غلطه

"ARÉVELK"
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons|ple, Galata

10 PARAS


## ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՎ ԵՒ ՇԱՐԱՅԱՐԵԼՈՎ ԱՄՓՈՓՈՒԱԾ

### 140. ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ
Յովհ. Ը. 31—59.

Աւետարանիչը կ'ուզէ չեշտել թէ «Առեր Յիսուս առ Հրէայս հաւատացեալս», այսինքն թէ յաջորդ խօսքերը կ'ուղղէր ոչ եւս կամակոր և հեգնող փարիսեցիներուն, այլ բարեմիտ և համակիր ժողովրդականներուն. սակայն անմիջապէս Յիսուսի առաջին խօսքերուն դէմ իսկ բողոքի ձայն բարձրացողները՝ բառին բուն իմաստով հաւատացեալ չէին կարող ըլլալ, կամ թէ այն համակիրներուն հետ խառն էին նաեւ հակակիրները, որոնք խօսքի տեր կը կանգնէին և իրենց առարկութիւնները կը շարունակէին։ Յիսուս նոր խօսակցութեան մը կը սկսի, և այդ հաւատացեալ ըսուողներուն դառնալով կ'ըսէ. «Եթէ դուք շարունակէք ինձի հաւատալ, եթէ հաստատուն մնաք իմ քարոզած ...

[illegible]

... չէին յաջողած, քաջալերութիւն չունեցան բոլոր քաղաքին մէջ աղմուկ յարուցանելու։

Յիսուս տաճարէն ելնելով իր աշակերտներուն հետ, հարկաւ ըստ սովորութեան Ձիթենեաց լերան ճամբան բռնեց, այն կողմերը գիշերելու։

### 141. Ի ԾՆԷ ԿՈՅՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
Յովհ. Թ. 1—12

Յովհաննէս աւետարանիչ պատմութիւնը կ'սկսի. «Եւ մինչդեռ անցանէր» խօսքով, առանց ճշդելու թէ ե՛րբ և ո՛ւր։ Թէպէտև արդի բաժանմանց համեմատ այս տեղէն նոր գլուխ կ'սկսի, սակայն այդ բաժանումներ հին ու բնագրական չեն, և ոմանք ուզեցին միահետ կարդալ. «Եւ Յիսուս խոյս ետ, և ել գնաց ի տաճարէ անտի, և մինչդեռ անցանէր ևն.»։ ...

[illegible]

## ԳՐԱԿԱՆ

### ՆՈՐԱԳՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնապաշտութիւն և Խորհրդապաշտութիւն.— Մեծարենցի «Նոր Տաղեր»ը

Բ.

Բնապաշտութիւնը մասնաւոր հզօրութեամբ կը մշակէ նաեւ սեռական կեանքը և կը վարդապետէ որ սեռական սէրը բնութեան ամէնէն հզօր ազդակներէն մէկն է։ Բայց ասիկա շատ հինցած ճշմարտութիւն մըն է, և Շիլլէրի բառերն պէս «մարդկութիւնը կերակրով և սիրով կ'ապրէր» արդէն Ադամի օրերէն ի վեր։ Այնու ամենայնիւ մեծ տարբերութիւն կայ Կէօթէի, Շիլլէրի, Շէյքսփիրի մը գծած սիրային տեսարաններուն և բնապաշտներու գծած պատկերացումներուն միջեւ։ Առաջիններուն գրածները բանաստեղծութիւն է, իսկ վերջիններունը բնախօսութիւն։ Հոգեկան ազնուագոյն ձգտումներ, բարձրագոյն գաղափարներու վեհագոյն տեսարան մը չեն կրնար բնապաշտներ ներկայացնել՝ առանց զայն գձձայականի փոխարկելու։ Այսպէս օր. ...

[illegible]

... այս իրական պատկերը և անցնինք անոր երկու այլանդակ ծնունդներուն՝ Խորհրդապաշտութեան (Symbolisme) ու Խորհրդապաշտութեան (Mysticisme), և տեսնենք թէ այս ուղղութիւններէն ո՞ր մէկուն հետեւող է մեր երիտասարդ բանաստեղծը՝ Միսաք Մեծարենց։

ԳՐԱՍԷՐ

## ՄԻՍԸ

Աւստրիոյ կառավարական պաշտօնեայ և առողջապահութեան ժողովի անդամ Տոքթ. Պէնվըլտ հետեւեալ գրութիւնը հրատարակած է Վիեննայի լրագրաց մէջ։ Օգտակարութեանը համար, թարգմանօրէն կը ներկայացնենք զայն մեր ընթերցողներուն։

Մարդկային ցեղին քաղաքակրթական զարգացումը գիտական խուզարկութեանց հետեւանք եղող գիւտերէն կախում ունի. և գիտութեանց մէջ թէօրի ըսուած այն բանը ուրկէ չի կրնար հեռանալ գիտունն իր ուսումնասիրութեանց մէջ, այժմ այն աղբիւրն է որուն կը պարտի կեանքի ծառն իր ծաղիկներն ու պտուղները։ Գի...

[illegible]

